*հավելված 1*

# ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## Թարգմանության ծառայություններ

**ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/14-14/9 ծածկագրով գնման ընթացակարգի**

| Հ/հ | Անվանումը | Չափի միավորը* | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|
| 1 | Գրավոր թարգմանություն /հայերեն-ռուսերեն/ | էջ | Ներկայացնել կատարյալ թարգմանություն՝ պահպանելով մասնագիտական տերմինների (ֆինանսներ, տնտեսագիտություն, իրավագիտություն, քաղաքագիտություն, հասարակագիտություն) ճշգրիտ փոխանցումը: Թարգմանությունը պետք է հստակ արտացոլի բնօրինակի բովանդակությունը, ոճն ու նպատակը, հետևի լեզվական նորմերին: |
| 2 | Գրավոր թարգմանություն /ռուսերեն-հայերեն/ | էջ | |
| 3 | Գրավոր թարգմանություն /հայերեն-անգլերեն/ | էջ | |
| 4 | Գրավոր թարգմանություն /անգլերեն-հայերեն/ | էջ | |

** Թարգմանության մեկ էջ է համարվում 1800 թվային նիշ պարունակող տեքստը:*

- Կատարողը (թարգմանիչը) պարտավորվում է չհրապարակել թարգմանվող նյութը և պահպանել դրա գաղտնիությունը:

- Թարգմանության ժամկետը սահմանվում է երեք թարգմանված էջ / աշխատանքային օր հաշվարկով: Առանձին դեպքերում՝ Պատվիրատուի համաձայնությամբ, կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:

- Թարգմանությունը պետք է տրամադրվի Microsoft Word էլեկտրոնային տարբերակով (Unicode տառատեսակներով և A4 ձևաչափի էջերի վրա)՝ Պատվիրատուի պահանջած եղանակով (էլեկտրոնային կրիչով կամ ուղարկելով Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին):

**ՀՀ կառավարության աշխատակազմ**